Գիտե՞ք, որ...

Դիզայնը տարբեր ժամանակներում

Գեղեցիկի նկատմամբ գիտության հակվածությունը նկատվել է հին ժամանակներում: Մարդկանց միշտ էլ հետաքրքրել է, թե ինչպես են վարպետների աշխատանքները հասել կատարելության: Դեռևս անտիկ աշխարհում հին հունական գիտնականները (Պլատոն, Արիստոտել, Սոկրատես) մտահղացել են դրանցից օգուտ՝ շահույթ ստանալու առաջին գաղափարները: Այդ ժամանակներից ի վեր արդեն աշխատել են ստեղծագործական մտքի զարգացման փուլերի վրա: Ենթադրվում է, որ այդ ժամանակներից դիզայնում համատեղվել են արվեստը և՛ արհեստը:

Դիտարկենք

- **Հին եգիպտական արվեստը** սկսեց ձևավորվել II դարում: Եգիպտոսում առաջին անգամ դրվեց թիկնամասով աթոռի դիզայնի հիմքը:
- **Հին Հունաստանի ճարտարապետությունը** տաճարների կառուցման համար ինտերիերի դիզայնը համալրեց խճանկարով՝ փայտե, աղյուսե, քարե սալիկներով: Պատերը և առաստաղները հեղեղված էին զարդանկարներով:
- **Հին Հռոմը** նույնպես մեծ հետք է թողել դիզայնի պատմության վրա: Այս երկրի բնակիչները ակտիվորեն կառուցել են լողավազաններ, լոգարաններ, որոնց ներքին հարդարանքը առանձնանում էր իրական շքեղությամբ՝ խճապատկերներով պատված՝ օգտագործելով ոսկի, արծաթ, սադաֆ, մարմար, փղոսկր, փայտ:
- **Հայաստանում Ք.ա.** Գառնիի տաճարում հայտնաբերված լոգարանի հատակը ծածկված է զարդանախշված խճապատկերներով: